ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2023 թվականի հոկտեմբերի 31-ի, ժամը 14:00-ի նիստի
N 3 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Ֆինանսական հաշվառման ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Հայկ Գերասիմի Մնացականյանի**, ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու **Ալվարդ Հրաչիկի Սարգսյանի**, ամբիոնի ավագ դասախոս **Նելլի Սուրենի Օգանեզովայի**, ամբիոնի դոցենտներ, տնտեսագիտության թեկնածու **Նարինե Ռուդիկի Մարտիրոսյանի**, տնտեսագիտության թեկնածու **Թեհմինե Արսենի Ստեփանյանի «Հաշվապահական հաշվառում. թեստեր և խնդիրներ» ուսումնամեթոդական ձեռնարկի** հրատարակությունը երաշխավորելու մասին հարցը:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Թ.Մ.Մկրտչյան**:

Զեկուցողը նշեց. հրատարակության ներկայացված ուսումնամեթոդական ձեռնարկը նախատեսված է տնտեսագիտական մասնագիտությունների համար և ամբողջությամբ համապատասխանում է «Հաշվապահական հաշվառում» և «Ֆինանսական հաշվառման հիմունքներ» դասընթացների ծրագրերին՝ ընդգրկելով ծրագրում ներառված բոլոր թեմաները: Ձեռնարկը ընդգրկում է 26 բաժին, որոնք խմբավորված են 4 տեսակների մեջ՝ տեսական թեստեր, գործառնությունների բովանդակության վերականգնման վերաբերյալ թեստեր, գործառնությունների ձևակերպումների կազմման վերաբերյալ թեստեր, տիպային խնդիրներ: Յուրաքանչյուր բաժնում զետեղված են նաև պարզաբանումներ համապատասխան թեմայի վերաբերյալ: Տիպային խնդիրների բաժնում յուրաքանչյուր տեսակի խնդիրներից բերված է մեկական օրինակ՝ իրենց լուծումներով և մեկնաբանություններով, որոնք կարող են օգնել ուսանողներին ավելի լավ ամրապնդել ստացված տեսական գիտելիքները:

Ուսումնամեթոդական ձեռնարկն ուղարկվել է 3 արտաքին անանուն («կույր») գրախոսության և 3 անկախ (արտաքին) փորձագետների կողմից ստացվել են դրական եզրակացություններ: Ձեռնարկի վերաբերյալ դրական եզրակացություն է ստացվել նաև «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ գլխավոր տնօրենի տեղակալ, գլխավոր հաշվապահ Նաիրի Մերուժանի Ադամյանի կողմից:

Բոլոր եզրակացություններում նշվում է, որ ներկայացված ուսումնամեթոդական ձեռնարկն ընդգրկում է «Հաշվապահական հաշվառում» և «Ֆինանսական հաշվառման հիմունքներ» դասընթացների ծրագրերում առկա թեմաների և հարցերի ամբողջական շրջանակը. այն նախատեսված է տնտեսագիտական բուհերի ուսանողների, ասպիրանտների, դասախոսների և հաշվապահական հաշվառման հարցերով հետաքրքրվողների համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսոր Դ.Ռ.Գալոյանը, դոցենտ Գ.Ս.Ասլանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով գրախոսների դրական եզրակացությունները, ֆինանսական հաշվառման ամբիոնի և գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ ֆինանսական հաշվառման ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Հայկ Գերասիմի Մնացականյանի**, ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու **Ալվարդ Հրաչիկի Սարգսյանի**, ամբիոնի ավագ դասախոս **Նելլի Սուրենի Օգանեզովայի**, ամբիոնի դոցենտներ, տնտեսագիտության թեկնածու **Նարինե Ռուդիկի Մարտիրոսյանի**, տնտեսագիտության թեկնածու **Թեհմինե Արսենի Ստեփանյանի «Հաշվապահական հաշվառում. թեստեր և խնդիրներ» ուսումնամեթոդական ձեռնարկը** երաշխավորել հրատարակության, 200 օրինակ տպաքանակով, «Տնտեսագետ» հրատարակչությունում (նախատեսված է հրատարակչության տարեկան թեմատիկ պլանով): Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 55, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2023 թ. հոկտեմբերի 31
Երևան